

Ա. Լ. Ք Ո Ւ, Ա. Մ Ո Ւ, Ո Ւ Թ Ի Ի Ն Ը,

(Երկրորդ և Գրքին մաս)

Այսօր կը պատկանի մուրթիւն պատճառող թոյներու զսակարգին. զանոնք զործածողը հետզհետէ կը մղուի անդադար և վերատին ենթարկուելու անոնց գերեզարդ բռնադատութեանը, զանալով անոնց մոլին, (այս կարգի թոյներ են աֆրոնը, ծխախոտին պարունակած նիքոթինը, հաշիշը, քոքայինը և տակուին խել մը ուրիշներ): Մեր զործարանային կազմուածքին ամէնէն ազնիւ և եկնասական նշանակութիւն ունեցող մասերն են, որ ամէնէն աւելի և շատ անգամ անդարմանելիօրէն կը փաստուին անկէ: Ուղեղը և ջրային զբրութիւնը թունաւորուելով ծնունդ կուտան նախ զինսօլութեան սովորական վիճակին՝ զուարթութիւն, ինքնամոռացում, լաւատեսութիւն. երեսակայտ թեան զործունէութիւնը թափ կը ստանայ, հետզհետէ հաճոյալի պատկերացումներ շարժականութեան մէջ կը գրուին: Ուղեղային կարողութիւններու ներգաշնակութիւնը կը սկսի խանգարուիլ, ինքնահակակշիռը ու խղճի խայթը կը նուազին, լեզուին կապանքները կը շղթայազերծուին, ենթական կը դառնայ չափազանց անկեղծ, և խնամով պահուած բոլոր գազտնիքները զուրս կը թռին, ինքնամոռանութեան առիթ տալով: Քիչ մըն ալ՝ և հաւամօթի և կենցաղագիտական զգացումները ու բարոյագիտական սկզբունքները կ'այլանդակուին, սեռային ստոր բնազդները թափ կուտան լեզուին, մինչև իսկ այդ մարդին մէջ զայն մղելով ամօթալի ու նասնական զործունէութեան մը:

Այս մուրթեան մէջ յառաջգիմութիւն բնոգները տակաւ կ'ենթարկուին տեսական թունաւորումի ախտաւորման, կիսովին յիմարացածներու ապաւորութիւնը թողլով: Այսպէս՝ ալքոլամոլը կը դառնայ հալածիչ, յարձակող, հայհոյիչ, սեռային անզգայ. կը սկսի երազել և դերերջանիկ մարդու արտայայտութիւնը կ'ունենայ, նիւթաղէս, մարմնաղէս և բարոյաղէս լինելով ամենաթշուառը Ամբողջ մարմնով կը զոզողայ, հաւասարակշռութիւնը կորսնցուցած: Իր զափարները, լեզուական արտայայտութիւնները և քայլուածքն ու շարժուելուները՝ անկապակից, այլանդակ և անճոռնի կը դառնան:

Յիշողութիւնը կը ծակծկի, գառողութիւնը կը դառնայ տղայական, անիմաստ ու պօղալի պատմուածքներ կ'ընէ, որոնք վերջ չունին Գրեթէ՛ բան մը չ'ուտեր, յաճախ կը փսխէ, իր բոլոր խնայողութիւնը կը վատնէ թունաւորուելու համար: Այս վիճակը ալքոլական բնակելի տեսակին և զինեմոլի խառնուածքին համեմատ կը ստանայ զանազան այլակերպութիւններ:

Կը հասնի ծայրագոյն վիճակը, այլասերումի բոլոր արտայայ-

տուժիւններով, Թունաւորման վերջաւորութիւնն է այն, որ յաճախ կ'արտայայտուի զարնուրբիլի բանդագուշանքներով և կամ յիմարութեան մոլեգին նոպաներով, որուն ենթական, ցնորած ու պատրանախար, կը դառնայ խաղալիքը փտազրգիտ երեւակայութիւններու: Ան կը կարծէ թէ հալածուած է վիթխարի գազաններէ ու սարսափած կը փախչի անպիտակ, արհամարելով խոչնդոտները. ծայրայիշ յուզումի և երկիւղի զգացումները իր դէմքին կուտան զարնուրանքի սարսուղըցիկ արտայայտութիւն մը: Տեսողական զգայարանքն է որ ամէնէն մեծ դերը կը կատարէ այս կարգի այլասերածներու հիւանդագին արտայայտութիւններուն մէջ: Անոր շուրջի առարկաները զանազան կերպարանափոխումներով կը շարժաւորուին և կեանքի ամէնէն տրամաթիկ ու սգախուր երեւոյթները կը պատկերացնեն: Անոր քունը իսպառ հեռացած, կ'ենթարկուի անկապակից մղձաւանջներու, անողոք հալածանքներու, կ'ունենայ ցանկութեանց կատաղի մոլուցքներ . . . ու վերջապէս դաժան մահացում մը:

Սեռային գործարանները, ալքոլի ազդեցութեամբ, ժամանակաւոր գրգռութիւններէ վերջ, հետզհետէ կ'անդամալուծուին, հուսկ ուրնին. այլասերումի անդարմանելի վիճակին ենթարկուելու համար Ալքոլամոլութիւնը ծնունդ կուտայ, ժառանգականութեամբ, հիւանդագին սերունդներու: Այս տեսակէտէն իզական սեռին ալքոլամոլութիւնը շատ աւելի վտանգաւոր է իր հետեւանքներով: Ժառանգական ալքոլամոլութեան արդիւնք են խեղանդամները, ապուշները, յիմարները, ոճրագործները եւ այլն: Տասնեակ մը տարիներ առաջ Վիէննայի կիները այլանդակ նորոյթ մ'ունէին խիստ փոքր շուներ ու նենալու Շահագրգիռները զանազան փորձերէ վերջ յաջողեցան դիւրութեամբ փոքրամարմին շուներ յառաջ բերել՝ պարզապէս մայր շուներուն ալքոլ խմցնելով: Ալքոլը կ'ամլացնէ նաև կիները: 115 ալքոլամոլներ ունեցան 476 զաւակներ, որոնցմէ 107ը՝ ջղային գալարումներու, յորցքի (convulsion) ենթակայ էին, 96ը՝ լուսնոտ էին, 23ը՝ մեռած ծնան, 19ը՝ մտայնոտ (maniaque), 26ը՝ իսթէրիք (hystérique), 23ը՝ անդամալոյծ, 23ը՝ զանազան ջղային հիւանդութիւններ ունէին՝ 3ը՝ աչքի շիւութիւն ունէին, 19՝ խուլախտաւոր էին, 3ը՝ խուլ և 3ը՝ անձնասպան եղան եւ այլն: Միայն 79ը առողջ ապրեցան: Ալքոլամոլի ընտանիքը 3 - 4 սերունդէ վերջ արդէն կ'անհետանայ կարգ մը աստիճանական անկումներէ վերջ: Ալքոլամոլի զաւակները հիւանդագին անզուպ հակում մը կ'ունենան դէպի ալքոլը: Ազատ-վազարական ընկերութիւնները հազարաւոր վիճակագրութիւններով ապացուցած են, որ իբր ըմպելի միայն ջուր գործածողները բազա-տաբար աւելի երկար կ'ապրին, այնպէս որ անոնք կը մերժեն ապա-

հովազրել հաստատուած ալքոլամոլները: Թէ՛ ալբոլը ախորժակ բացող է եւ կամ զօրացուցիչ է, բացարձակապէս սխալ նախապաշարում մըն է. հնարուած շահագրգռուողներու կողմէ՛, Ալբոլը Թոյն մըն է. որուն մասնաւոր պարագաներու տակ գործարհումեան իրաւունքը կը պատկանի բժիշկին:

Կանխազգուշումիւն եւ դարմանում: Յանկայի է որ բոլոր կառավարութիւնները, հետեւելով Միացեալ-Նահանգաց օրինակին, խրատի ու միանգամ ընդ միշտ արգիլեն անոր արտադրութիւնը եւ գործածութիւնը: Մինչ այդ, կարելի է կռուիլ ալքոլամոլութեան զէ՛մ անհատական եւ հասարական միջոցներով. այսպէ՛ս՝ ալքոլ-թոյնը եւ անոր աւերները ներկայացնելով, անհասները, մասնաւոր երիտասարդները զգուշութեան վարժեցնելով, հակալքոլական ընկերակցութիւններ կազմելով ու ստողջապահական կենցաղի մը օրինակը աւելով, զարմանելով ալքոլամոլները մասնաւոր զարմանատուներու մէջ, յանկարծակի կամ աստիճանաբար զրկելով ալքոլային բմպելիներէն եւ մասնաւոր սննդատու թեան մը ենթարկելով ելն-, ելն-:

(Միտիլի)

Բժ. Ն. ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ

Դ Ա Լ Ա Ր Կ Ե Ա Ն Ք

ՎՈՐՈՆՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

II.

Այսպէս ուրեմն, ինչպէս հինէն ի վեր մարդիկ հաւատացեք են, եթէ ոչ անմահութեան, զոնէ՛ կրկարակեցութեան կարելիութեան, այսօր եւս կան մարդիկ, որ կը ճգնին երիտասարդացնել ձերերը եւ պարզեւել զայրար կեանք մը:

Փորձերուն նկարագրութեանէն առաջ, անհրաժեշտ կը նկատեմ բացատրել հետեւեալ կարեւոր հարցերը. — Որքա՛ն կարելի է ապրիլ միջին հաշիւով:

Յաճախ կ'ըսուի թէ, որքան բարգոյթեան եւ կատարելութեան հասնի անգամակազմութիւնը, անասուններէն մինչև մարդիկ, այնքան կը կարճնայ կեանքի տևողութիւնը: Այսպէս կրիաները կրնան ապրիլ երկու զարս Մեծ օձերը եւ կոկորդիլոսներն ալ կ'ապրին նոյնքան երկար: Կենդանաբանական տարեգրութեանց մէջ կը յիշուին արծիւներ, որոնք ապրած են 110 տարի: Վայրի սագերը՝ 80 տարի, կարպար՝ 70 տարի: Երբ կը հասնինք ստնաւորներուն, կը տեսնենք որ կեանքի տևողութիւնը կը կարճնայ: Փիղերը կրնան ապրիլ 100 տարի, ձիերը՝ 40 տարի, եզները՝ 30 տարի, ոչխարները՝ 12 տարի: (Այս տարիքները կը ներկայացնեն խոր ձերութիւնը):